



Օրուան հրատապ խնդիրներէն մէկն ալ Ատրպատականի անկախութեան հռչակումն է :

Մենք, Հայերս ալ ուշի ուշով կը հետեւինք ղէպքերուն եւ արդար է մեր հետաքրքրութիւնը :

Արդար, ո՛չ միայն այն պատճառով որ Ատրպատականի մէկ կարեւոր մասը պատմական Հայաստանի մասը կը կազմէ, այլև անոր համար որ հոն, երկար տարիներէ ի վեր ունեցած ենք հայ զաղութ մը, կազմակերպուած շրջան մը, հայապահպանման լաւագոյն օրրան մը : Հայ յեղափոխութեան ալ մեծապէս նպաստած է այդ զաղութը, թէ իբրեւ շրջաններու հանգոյց մը եւ թէ իբրեւ հայ փախստականներու ապաստանարան մը :

Դժբախտաբար, թերթին ծաւալը եւ ներկայ պայմանները թոյլատու չեն Ատրպատականի հայութեան վերջին վախճանամեայ կեանքի մանրամասնութիւնները եւ աշխարհագրական տեղեկութիւններ ներկայացնելու :

Ուստի պիտի դռնանամ շարք մը տեղեկութիւններով :

Ատրպատականի Հայերը համեմատաբար բախտաւոր եղած են թրքահայերէն, որովհետեւ ազատ մնացած են զանգուածային կոտորածներէ եւ կորստաբեր տեղահանութենէ :

Թրքական հիւպատոսներ եւ գործակալներ միշտ ալ աշխատած են եւ մեծադուժար ոսկի տրամադրած են պարսիկ ժողովուրդը լարելու Հայերուն դէմ եւ կոտորածներ յառաջ բերելու համար, սակայն պարսիկ կեղրոնական կառավարութիւնն ու Շահերը ձախողեցուցեր են թրքական ձեռնարկները եւ դաւերը :

Դեռ 1894—1895 թուականներուն, Նասրէտին Շահին օրով, Թէհրանի թուրք հիւպատոսի նախագահութեամբ կազմուած ժողովի մը մէջ կ'որոշուին Պարսիկները Հայերու դէմ դրդուելու միջոցներ :

Թուրք դեսպանը Շահին կը յայտնէ թէ Հայերը Պարսից կառավարութեան դէմ դաւադրութիւն մը կազմակերպած են, մանաւանդ Շահի անձին դէմ :

Շահը թուրք դեսպանին մտադրութիւնը հասկնալով, կը կանչէ Սադրազամը եւ կը հրամայէ. — «Բննէ՛ Հայերու մասին տարածուած լուրերը եւ թրքական դեսպանին ասացուցուր Հայերու հաւատարմութիւնը եւ մեր կառավարութեան մէջ անոնց ունեցած օրինակելի կենցաղավարութիւնը» :

Սադրազամը առանց երկար մտածելու, վերջովուժ կը պատասխանէ. — «Վեհ Շահ, Հայերու մասին տարածուած լուրերը շինծու են եւ ես կեանքովս կ'երաշխաւորեմ Հայերու հաւատարմութիւնը» :

Թէհրանի դեսպանին ձախողանքէն վերջ, գործի կը լծուին նաեւ Սարմաստի եւ Ուրմիոյ թուրք հիւպատոսները, որոնք կը կազմակերպեն հայկական տարազով եւ թուրքերէ բաղկացած աւազակախումբ մը, հաւատացնելով թէ Հայեր են :

Շուտով սակայն, աւազակախումբը կը ձերբակալուի եւ կը սարգուի որ՝ աւազակապետը Պարսիկ փախստական մըն է, իսկ անդամները թուրքեր են, կամակերպուած Թաւրիզի թուրք հիւպատոսի հրահանգով եւ 300 հնչուն ոսկիով :

Թրքական դաւերը երեւան կուզան նաեւ Թաւրիզի մէջ, ուր Պուլէն եկած մօլլաներ եւ սօֆթաներ, հրապարակով համիսլամութիւն կը քարոզեն, խօսելով «Վհաննամ»-ի եւ «Վէննամթի» մասին, բարձրաձայն յայտարարելով թէ՛ «կեպալուրները կոտորելու ժամը հասած է» :

Ճիւղերը կը գործեն նաեւ Արտապիլի, Աստարայի, Մարաղայի եւ ուրիշ շրջաններու մէջ :

Հայ մատնիչի մը մասնակցութեամբ, թրքական գործակալներ, Հայու տարազ հագած, Պարսից նուիրական մէկ տօնին ատեն մզկիթի դուռը կեցած կը ծաղրեն եւ կը հայհոյեն «Շիայի» օրէնքին եւ փողոցէն անցնող սէյիտի մը վրայ ատրճանակ կը պարպեն :

Այս եւ այսպիսի բազմատեսակ ղէպքերով, թուրքերը կը ջանան ժամ մը առաջ կոտորել տալ դոնէ Ատրպատականի Հայերը :

Պարսիկ կառավարութիւնը աշարջութեամբ կը հսկէր ցաւալի ղէպքերու առաջն առնելով, բայց եւ այնպէս անօրակաս էին նաեւ թրքական ոսկիներէն կաշառուած պաշտօնեաներ եւ խաներ :

Ու վերջապէս 1897 Մարտ 20ին կը բռնկի Թաւրիզը :

Նոյն օրը, թուրք կիներ կը յարձակին ռուսական հիւպատոսարանի հայ ծառային վրայ, չուկային մէջ եւ «Նա՛ Ալի» կանչելով, օգնութեան կը հրաւիրեն ամբօխը :

Ծեծ, թալան ու կողոպուտը կը սկսին :

Մարտ 31ին 3—4 հայկական տուններ կը կողոպտուին եւ կը մնասուին : Ետտ մը Հայեր ծեծի, խոշտանդումի կ'ենթարկուին : Բայց չուկայի Հայերը կը յաջողին իրենց տուններն ապաստանիլ :

Ամբոխը կը յարձակի Հայոց գերեզմանատան վրայ, կը քանդէ ու կը տանի դռները, քանի՛ մը դիակներ գերեզմաններէն կը հանուին եւ բացօթեայ կը ձգուին : Հայերը սարսափահար կը լեցուին Ռուսաց հիւպատոսարանը :

HARAJ | February 14, 1946

« Ամէն միջոց ի գործ դնել, որ վտանգի չենթարկուին իմ հաւատարիմ Հայերը », կը հրամայէ Շահը Վալեաթին (Թաղաժառանգին, որ Թաւրիզ կը նստէր) :

« Ստովութեանց աղբիւրը յայտնի է », կը հեռադրէ զահաժառանգը Շահին :

Պարսիկ զինուորներով կը լեցուին հայկական Թաղերը, կառավարութեան ազգու միջամտութեան եւ բարեացակամութեան շնորհիւ, խռովութիւնները կը խափանուին :

Թաւրիզի ռուս հիւպատոսը, Պետրով, Թէհրանի դեսպանի հրահանգին համաձայն, կը պահանջէ կատարելապէս կարգը վերահաստատել եւ Հայերու մնասններուն հատուցում տալ, հակառակ պարադային սպառնալով Զուլֆա դանուած ռուս հեծելազունները գործի խառնել :

Հիւպատոսը ինքն ալ կը յայտնէ զահաժառանգին. — « Եթէ մենք թուրքիոյ Հայերուն ջողնեցինք, պատճառը այն է, որ թրքահայերը մեզի չդիմեցին » :

Այս խռովութեանց ատեն Ատրպատականի նահանգապետը՝ Ամին - Գուլէն, Թէհրան՝ նախարարական ժողովին նախագահելու կանչուած էր : Նորընտիր նահանգապետը, ազդեցիկ եւ կարող Ամիր - Նիզամ, Սպրիլ Եին նոր կը հասնի Թաւրիզ եւ Տին արդէն վերջ կուտայ խռովութեանց : Հայերը մնասուց հատուցում կը ստանան :

Եւ այդ խռովութիւններէն վերջ պարսիկ կառավարութեան խնամքն ու դուրդուրանքը կ'աւելնան : Զարադործերը կը պատժուին :

Պարսիկ ժողովուրդի եւ ամբօխի վրայ մեծ ազդեցութիւն ունեցող Մուշտէխար եւ բարձրաստիճան պաշտօնեաներ կ'այցելեն Հայոց «խալիֆայ»-ին, Առաջն տեղապահ Յոյսէյի վարդ. Սարաճեանին : Գահաժառանգն ալ Թէհրան մեկնելէ առաջ շնորհակալութիւն կը յայտնէ հայ տեղապահին, որ Շահին կողմէ կը ստանայ պարսկական առաջնակարգ շքանշան, ի վարձատրութիւն Պարսից կառավարութեան մատուցած ծառայութեան :